իմոցն։ Ծանիր Զիկմունթ արքայտ Լէհու, զի
զամ ի վերայ քո անթիւ զօրօք եւ անհամար
հեծելովք, իբրեւ զարծիւ չառաչմամբ եւ ա-
հարկու. զի ծանիցես դիս եւ իմացիս զզօրու-
թիւնս իմ, որ եմ նման երկնայնոց։ Իսկ դու 85
տկար եւ նկուն, զոր ոչ կամիս հնազանդիլ
հզօրիս եւ լինել ինձ հարկատու. տեսցես թէ
զինչ անցք անցանիցեն ի գլուխս քո եւ քոյոցն։
Զի դու ո՞վ իցես, զի ընդդէմ կայցես ինձ կամ
պատերազմ տացես ընդ յաղթող զօրս իմ։ Ո՞վ 90
ես դու կամ յո՞վ իցես յուսացեալ. եթէ յեկե-
ղեցի՞սն քո յորում աղօթէքն. զամենեսին զնո-
սա գրաստուց իմոց ախոռ արարիցս եւ ձիոց.
իսկ թէ ի փա՞յտ ձեր յուսացեալ ես. ես նո-
վաւ մանրեցից զգլուխս քո։ Երդնում ի հաւատ 95
Մահմէտի եւ ի կրօնս մըսլմանութեան. զի որ
ինչ խորհեցայ ես՝ զայն արարից։ Այլ եւ զքո
թախտն Քրաքով, զՎով եւ զՎուպլին եռու
պարգեւ զօրացս իմոց»։ Եւ այլ բազում բանս
հպարտ եւ հայհոյութիւնս մեծաբանութեան 100
գրեաց եւ ուղարկեց առ թագաւորն Զիկ-
մունդ։

Եւ ինքն զկնի թղթոյն վաղվաղակի գայր
հասանէր ի Պուդտան։ Զկնի նորա եհաս եւ
խանն ԶՌ թաթարովք եւ մտեալ նա նախ ի 105
սահմանս Լէհու վնաս գործեց յոլով։ Իսկ
զօրքն Տաճկաց իրեք տեղիս բանակ հարեալ՝

81 յիմոցն։ — 83 չառաջմամբ։ — 85 յերկնայնոց։
— 91 ով... ուսացեալ։ — 95 ի չիք։ — 97 խոր-
հեցա։ — 107 առեալ։